*ւանդատան պատին (Ցուցկ. Ա. 105) և տաճարից ու Պողչի վիմափորից դէպի հիւսիս ընկած ժայռի մէջ, երկու խցիկների դրան ճակատին։ Շինութեան ժամանակից է նաև Գոհարի «դուստր պարոն Սարգսի Մեհեւանանց» արձանագրութիւնը աջ աւանդատան ճակատաքարի վերայ, որ* 60 *դահեկան է տալիս եւ երեք օր ժամ ստանում (Ցուցկ. Ա.* 81*)։ Մեհեւանանց տոհմը ծագմամբ Բաղաց գաւառից էր, որոնք Ջաքարեանց նուաճումներից յետոյ՝ Իւանէ աթաբէգից Նորին բերդը ժառանգութիւն ստացան, Վայոց ձորի Եղփի գետակի հովտում (*)։ Շինութեան ժամանակից է, հաւանօրէն, և տիկին Ջուզայի արձանագրութիւնը տաճարի արևմտեան պատի ճակատին, շինութեան ՈԿԴ թուականի արձանագրութիւնից բարձր, որ* 120 *դահեկան է տալիս և վեց պատարագ ստանում (Ցուցկ. Ա.* 108*)։*



*Պատկեր 139.*

(*) *Տես Ալիշան, Սիսական, եր.* 168։